ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Ավստրիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. <u>Անունը, ազգանունը՝</u>
Լիլիթ Սարոյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության պետ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>
2023թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա)

4. <u>Հրավիրող կողմը</u>
Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհուրդը (CEER) և Էներգետիկ համայնքի քարտուղարությունը

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>
Մասնակցել «EU4Energy. ԱլԳ երկրներում էներգիայի սեփական արտադրման և սպառման համար կարգավորումների համապատասխանեցումը էներգետիկ համայնքի պահանջներին» աշխատանքային քննարկմանը:

6. <u>Քննարկված թեմաները.</u>
Քննարկվեցին հետևյալ թեմաները.

- Էներգիայի սեփական արտադրության-սպառման էներգետիկ համայնքի քաղաքականության ուղեցույցներ և կարգավորման շրջանակ
- Արտադրության-սպառման սակագներ կամ ավելացված արժեքի հարկ
- Էներգետիկ համայնքներ - ԵՄ օրենսդրության պահանջներ

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>
Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի պատվիրակությունները: Յուրաքանչյուր երկրի պատվիրակ ներկայացրեց

իր երկրում այլընտրանքային էներգիայի արտադրությանը և սպառմանն առնչվող կարգավորումները, քննարկվեցին ոլորտի զարգացման հեռանկարներն ու մարտահրավերները:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Հանդիպման ընթացքում որոշվեց շարունակել համագործակցությունը ինչպես եվրոպական էներգետիկ համայնքի և կարգավորողների խորհրդի, այնպես էլ ԱլԳ երկրների միջև՝ կիսվելով լավագույն փորձով ու գիտելիքներով:

9. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի
վարչության պետ

Լ. Սարոյան
07.12.2023թ.